ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 ՄԱՐՏ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2020** ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 04-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանին *որոշում է՝*

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի 2020 թվականի մարտի 04-ի հերթական նիստի օրակարգը :

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մեծ Մանթաշի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և տնօրեն նշանակելու մասին :

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 33-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին :

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի << Մեծ Մանթաշ համայնքի արևային ֆոտովոլտային կայանի կառուցում և փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում >> ծրագրին հավանություն տալու մասին:

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և «Մեծ Մանթաշի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2020 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին :

Զեկուցող՝ համայնքի ղեկավար Ա.Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԳՈՌ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/ ----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/ ----------

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ /կողմ/ ----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<< 04 >> մարտ 2020 թվական
գյուղ Մեծ Մանթաշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիկան օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին կետով, 65-րդ հոդվածի 1,2 կետերով , << Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 14,15,26 կետերի դրույթներով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի ղեկավարի 2020թվականի մարտի 02-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> թիվ 16-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի ավագանին , *որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշի համայնքի ղեկավարի 2020թվականի մարտի 02-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> թիվ 16-Ա որոշումը:

2.Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն :

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը համաձայն սույն որոշման թիվ 1 հավելվածի :

4.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն ամրացվող անհատույց օգտագործման իրավունքով հանձնվող գույքի կազմն ու արժեքը և փոխանցման ակտը համաձայն սույն որոշման 2-րդ հավելվածի :

5. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի << Մեծ Մանթաշի մանկապարտեզ >>

համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակել Վարսենիկ Չոբանյանին (անձնագիր՝ AT 0332316 տրված 16.12.2019թ. 028-ի կողմից բնակության վայրը Շիրակի մարզ գ. Մեծ Մանթաշ 14 փ. , 2 նրբ. , տուն 1) :

Ավագանու 7 անդամներից նիստին մասնակցել են ավագանու 5 անդամներ կողմ 5 , դեմ 0, ձեռնպահ 0 :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԳՈՌ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/ ----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/ ----------

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ /կողմ/ ----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<< 04 >> մարտ 2020 թվական
գյուղ Մեծ Մանթաշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 ՄԱՐՏ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 3-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 33-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդկետի, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների դրույթներով.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանին *որոշում է՝*

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի 2020 թվականի բյուջեի հաստատման մասին» թիվ 33-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Ծախսային մաս

ա.Որոշման բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման մասում՝ բաժին 01, խումբ 1, դաս 1 «Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում» ծրագրի 2111 տողի «26,790,148.50»թիվը փոխարինել «28,590,148.5» թվով և ծախսերի տնտեսագիտական դասակարգման մասում՝ «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» 4111 տող 4111 հոդվածի «19,300,000.00» թիվը փոխարինել «21,100,000.00» և «Մասնագիտական ծառայություններ» ծրագրի 4241 հոդվածի «700,000.0» թիվը փոխարինել «624,000.0» թվով և «Պարդատիր վճարներ » 4823 հոդվածի «0.0» թիվը փոխարինել «76.0» թվով, տնտեսագտական դասակարգման մասում՝ 4241 տողի 4241 հոդվածի «800.0» թիվը փոխարինել «724.0» թվով :

բ. Որոշման բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման մասում՝ բաժին 09, խումբ 1, դաս 1 «Նախադպրոցական կրթություն» ծրագրի 2911 տողի «17,405,000.0» թիվը փոխարինել «23,300,000.0» թվով և ծախսերի տնտեսագիտական դասակարգման մասում՝ «Սուբսիդիաներ ոչ պետական (համայնքային) կազմակերպություններին» 4411 տող 4511

հոդվածի «27.800,00» թիվը փոխարինել «23.0000,0»թվով

գ. Որոշման բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման մասում՝ բաժին 09, խումբ 5, դաս 1 «Արտադպրոցական դաստիրակություն» ծրագրի 2951 տողի «10,695,000.0» թիվը փոխարինել «0.0» թվով

դ. Որոշման բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման մասում՝ բաժին 11, խումբ 1, դաս 2 «ՀՀհամայնքի պահուստային ֆոնդ» ծրագրի 3112 տողի «8,916.1» թիվը փոխարինել «11,916,100.0» թվով և ծախսերի տնտեսագիտական դասակարգման մասում՝ «Պահուստային միջոցներ» 4771 տող 4891 հոդվածի «8,916.100.0» թիվը փոխարինել «11,916,100.0» թվով :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԳՈՌ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/ ----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/ ----------

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ /կողմ/ ----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<< 04 >> մարտ 2020 թվական
գյուղ Մեծ Մանթաշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՄԱՐՏ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԵՎԱՅԻՆ ՖՈՏՈՎՈԼՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՎ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ >> ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, դրույթով.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանին *որոշում է՝*

Տալ հավանություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի << Մեծ Մանթաշ համայնքի արևային ֆոտովոլտային կայանի կառուցում և փողոցային լուսավորության ցանցի ընդլայնում >> ծրագրին՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիայի տրմադրման 2020 թվականի ծրագրերում ընդգրկելու համար :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԳՈՌ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/ ----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/ ----------

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ /կողմ/ ----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<< 04 >> մարտ 2020 թվական
գյուղ Մեծ Մանթաշ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Մեծ Մանթաշ, (093)637020 , metsmantash.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
04 ՄԱՐՏ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 5-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին մասի , Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանին *որոշում է՝*

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և «Մեծ Մանթաշի նախադպրոցական և մարզամշակութային կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների 2020 թվականի քանակը , հաստիկացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին >> թիվ 31-Ա որոշումը:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի և «Մեծ Մանթաշի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 1-ից :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ -6 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՖՐՈՒՆԶԻԿ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԳՈՌ /կողմ/ ----------

ԳԱԲՈՅԱՆ ԺՈՌԱ /կողմ/ ----------

ԿՅՈՒՐԵՂՅԱՆ ՍՄԲԱՏ /կողմ/ ----------

ՍԱՐԳՍՅԱՆ ԳԱԳԻԿ /կողմ/ ----------

ՉՈԲԱՆՅԱՆ ՎԱՐՈՒԺԱՆ /կողմ/ ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<< 04 >> մարտ 2020 թվական
գյուղ Մեծ Մանթաշ

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մեծ Մանթաշ համայնքի ավագանու
2020 թվականի մարտ 04-ի թիվ 5-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը - 13

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը(դրամ)	Բարձր լեռնային հավելում (դրամ)	Ընդամենը (դրամ)
Հայեցողական պաշտոններ								
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	143000	61.63	1	143000	8000	151000
Համայնքային ծառայության պաշտոններ								
2	Աշխատակազմի քարտուղար(1.2-1)	1	143000	61.63	1	143000	8000	151000
3	Գլխավոր մասնագետ/2.3-1/	1	142000	61.2	1	142000	8000	150000
4	Առաջատար-մասնագետ-հաշվապահ (3.1-1)	1	141000	60.77	1	141000	8000	149000
5	1-ին կարգի մասնագետ /3.2-1/	1	130000	51.03	1	130000	8000	138000
6	2-րդ կարգի մասնագետ/3.3-1/	1	105000	45.25	1	105000	8000	113000
Տեխնիկական սպասարկման անձնակազմ								
7	Համակարգչային օպերատոր	1	102000	43.96	1	102000	8000	110000
8	Համայնքի ջրագծերի օպերատոր	1	92618	39.9	1	92618	8000	100618
9	Վարորդ	1	92618	39.9	1	92618	8000	100618
10	Ջրագծերի ներքին ցանցի օպերատոր	1	102000	43.96	1	102000	8000	110000
11	Հավաքարար	1	92618	39.9	1	92618	8000	100618
12	Ակումբավար	1	92618	39.9	1	92618	8000	100618
13	Գրադարանավար	1	92618	39.9	1	92618	8000	100618
Ընդամենը		*11*	*1471090*	-	*13*	*1471090*	*104000*	*1575090*

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավար՝ Արկադի Գրիգորյան

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Մեծ Մանթաշ համայնքի ավագանու 2020 թվականի
մարտ 04-ի թիվ 5-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՅՈՒՅԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉՓԵՐԸ

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը - 18

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը(դրամ)	Բարձրլեռնային հավելում (դրամ)	Աշխատած ամիսների քանակը	Ընդամենը (դրամ)	Ընդամենը մեկ տարվա վճարվողգումարը
1	Տնօրեն	1	*137000*	*59.05*	1	137000	8000	12	145000	1740000
2	Հաշվապահ	1	*92618*	*39.9*	1	92618	8000	12	100618	1207416
3	Մանկավարժ ֆիզ.պատ.գծով	1	*104750*	*45.1*	0.5	52375	4000	10	56375	563750
4	Գործ./համ.օպերատոր/	1	*92618*	*39.9*	1	92618	8000	12	100618	1207416
5	Պահակ	1	*92618*	*39.9*	1	92618	8000	12	100618	1207416
6	Դաստիարակ	1	*130000*	*32.2*	0.56	72800	4480	12	77280	772800
7	Դաստիարակ	1	*130000*	*32.2*	0.56	72800	4480	12	77280	772800
8	Դաստիարակ	1	*130000*	*32.2*	0.56	72800	4480	12	77280	772800
9	Դաստիարակ	1	*130000*	*32.2*	0.56	72800	4480	12	77280	772800
10	Բուժ.քույր	1	*92618*	*39.9*	1	92618	8000	10	100618	1006180
11	Դաշնակահար	1	*104750*	*45.1*	0.75	78562	6000	10	84562	845620
12	Դայակ	1	*92618*	*39.9*	1	92618	8000	10	100618	1006180
13	Դայակ	1	*92618*	*39.9*	1	92618	8000	10	100618	1006180
14	Տնտեսվար	1	*92618*	*39.9*	1	*92618*	8000	10	100618	1006180
15	Խոհարար	1	*92618*	*39.9*	1	92618	8000	10	100618	1006180
16	Խոհարարի օգնական	1	*92618*	*39.9*	0.75	69464	6000	10	75464	754640
17	Բակապահ	1	*92618*	*39.9*	0.75	69464	6000	12	75464	905568
18	Ջեռուցման համակարգի օպերատոր	1	*92618*	*39.9*	1	92618	8000	6	100618	603708
	Ընդամենը	**18**	***1885298***		***14.99***	***1531627***	***119920***		***1651547***	***17157634***

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավար՝ Անդրանիկ Գրիգորյան

ՀԱՍՏԱՏՎԱԾ է

Հայաստանի Հանրապետության

Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայքի

Ավագանու 04.03.2020թ թիվ 2-Ա որոշմամբ

Մեծ Մանթաշ համայնքի ղեկավար

_____ Ա.Գրիգորյան

Կազմված է 04.03.2020 թ և բաղկացած է 8 թերթից

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

ՕՐԻՆԱԿ 3

ԳՐԱՆՑՎԱԾ է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ

ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ «09» 03 2020թ

Գրանցման թիվ 53.215.1120295

Վկայական _____

ՀԿՀՀ 05549718

«09» 03 2020թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Շիրակի մարզ, գ. Մեծ Մանթաշ 2020թ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Մեծ Մանթաշի մանկապարտեզ » համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը /այսուհետ՝ մանկապարտեզ / շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող մանկապարտեզ է,որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

Հաստատության անվանումն է՝

Հայերեն լրիվ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն.

Հայերեն կրճատ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ << ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ.

Ռուսերեն լրիվ՝ Республика Армениа Марз Ширак “ Мец Манташский детский сад ” общинная некоммерческая организация

Ռուսերեն կրճատ՝ “ Мец Манташский детский сад ” ОНКО

Անգլերեն լրիվ՝ REPUBLIC OF ARMENIA MARZ OF SHIRAK ,,METS MANTASH KINDERGARTEN ,, COMMUNITY NON-COMMERCIAL ORGANIZATION

Անգլերեն կրճատ՝՝ REPUBLIC OF ARMENIA MARZ OF SHIRAK ,, METS MANTASH KINDERGARTEN,, CNCO

Հաստատության հիմնադիրը ՀՀ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքն է /այսուհետ՝ հիմնադիր /, որի անունից հանդես է գալիս ՀՀ Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավարը:

2. Մանկապարտեզն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

3. Մանկապարտեզի գտնվելու վայրն է 3016 ՀՀ Շիրակի մարզ, գ. Մեծ Մանթաշ , խճուղի1 շենք 11:
Հիմնադրի գտնվելու վայրն է 3016 ՀՀ Շիրակի մարզ, գ. Մեծ Մանթաշ , խճուղի 2 շենք 1 :

4. Մանկապարտեզը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Մանկապարտեզը իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Մանկապարտեզն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Մանկապարտեզն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Մանկապարտեզն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Մանկապարտեզը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Մանկապարտեզում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

II. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Մանկապարտեզի գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

11. Մանկապարտեզի կրթական գործունեությունն իրականացվում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

12. Մանկապարտեզը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է մանկապարտեզում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվել և

դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական և ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների և հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը:

13. Մանկապարտեզի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Մանկապարտեզը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ–հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

15. Մանկապարտեզը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

III. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Մանկապարտեզի երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով: Մանկապարտեզի երեխաների համակազմի համալրման կարգը, որպես կանոն, իրականացվում է տարիքային, ընտանեկան և ազգակցական հատկանիշներով: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների խմբերի խտությունը սահմանում է կրթության պետական կառավարման լիազորած մարմինը: Մանկապարտեզի միևնույն հասակային խմբերի առավելագույն խտությունը.

Խմբերի անվանումը	Երեխաների թիվը
Վաղ հասակի առաջին խումբ	10-15 երեխա
Վաղ հասակի երկրորդ խումբ	15-20 երեխա
Կրտսեր առաջին խումբ	15-20 երեխա
Կրտսեր երկրորդ խումբ	25-30 երեխա
Միջին խումբ	25-30 երեխա
Ավագ խումբ	25-30 երեխա

17. Մանկապարտեզ ընդունվում են մինչև 6 տարեկան երեխաները նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում:

Խմբերի անվանումը	Ցուցանիշի անվանումը
Վաղ հասակի առաջին խումբ	մինչև մեկ տարեկան
Վաղ հասակի երկրորդ խումբ	մեկից երկու տարեկան
Կրտսեր առաջին խումբ	երկուսից երեք տարեկան
Կրտսեր երկրորդ խումբ	երեքից չորս տարեկան
Միջին խումբ	չորսից հինգ տարեկան
Ավագ խումբ	հինգից վեց տարեկան

Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր,որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:
18. Մանկապարտեզում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Մանկապարտեզը կարող է մշակել և, նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:
19. Մանկապարտեզներն իրենց գործունեության ուղղություններին համապատասխան բաժանվում են հետևյալ տեսակների՝
ա) մանկապարտեզ, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր և ապահովում է երեխաների խնամքը.
բ) հատուկ մանկապարտեզ՝ երեխաների ֆիզիկական և հոգեկան զարգացման շեղումների շտկման ծրագրերի գերակայությամբ.
գ) առողջարանային մանկապարտեզ՝ սանիտարահիգիենիկ, կանխարգելիչ և առողջապահական ծրագրերի գերակայությամբ.
դ) մանկական կենտրոն, որն իրականացնում է միայն նախադպրոցական կրթական ծրագրեր և խորհրդատվական ծառայություններ.
ե) համալիր մանկապարտեզ, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական հաստատությունների մի քանի տեսակներ կամ խմբեր.
զ) կրթահամալիր, որի կազմում կարող են ընդգրկվել նախադպրոցական և այլ մակարդակի կրթական ծրագրեր իրականացնող մի քանի հաստատություններ.
է) մանկատուն, որն իրականացնում է ծնողազուրկ, ծնողական խնամքից զուրկ, սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների մինչև 6 տարեկան երեխաների խնամքը, դաստիարակությունը և ուսուցումը:
20. Մանկապարտեզի աշխատանքային ռեժիմը, մանկապարտեզում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշվում են նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան: Մանկապարտեզն աշխատում է 5-օրյա աշխատանքային շաբաթով, իսկ երեխաների մանկապարտեզում մնալու տևողությունը՝ 9- ժամ է:
Տարիքային խմբերի համալրումը նոր ընդունված և մյուս տարիքային խմբերից տեղափոխված երեխաներով կատարվում է ուսումնական տարվա վերջում:Մանկապարտեզում երեխաներին սնունդ տրվում է օրական երեք անգամ՝ նախաճաշ, ճաշ, հետճաշիկ: Թույլատրվում է մանկապարտեզի կամ առանձին խմբերի գործունեության կազմակերպումը ցերեկային, երեկոյան ժամերին, շուրջօրյա, հանգստյան և տոնական օրերին, ինչպես նաև երեխաների ազատ հաճախումը մանկապարտեզ:

21. Մանկապարտեզի երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է հաստիքային բժշկական անձնակազմի միջոցով, որոնք տնօրինության հետ պատասխանատվություն է կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:
22. Մանկապարտեզի մանկավարժական և սպասարկող անձնակազմերը համայնքի բյուջեի հաշվին (բացի առաջին անգամ բժշկական քննություն անցնողներից), պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

23. Մանկապարտեզի կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:
24. Երեխաների ընդունելության ժամանակ մանկապարտեզի տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանը և այլ

փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են մանկապարտեզի գործունեությունը:
25. Մանկապարտեզի և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:
26. Երեխայի և մանկապարտեզի աշխատակիցների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:
27. Մանկապարտեզում աշխատանքի ընդունվում են այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:
28. Մանկապարտեզի աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքներն ու արտոնությունները որոշվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, մանկապարտեզի կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
29. Մանկապարտեզի աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու մանկապարտեզի կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

V. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

30. Մանկապարտեզի կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ մանկապարտեզի տնօրենը(այսուհետ՝տնօրեն):
31. Մանկապարտեզի հիմնադիրն ունի մանկապարտեզի գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
32. Մանկապարտեզի հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
ա) ավագանու համաձայնությամբ մանկապարտեզի հիմնադրումը,
բ) մանկապարտեզի գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.
գ) մանկապարտեզին սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.
դ) մանկապարտեզի կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.
ե) մանկապարտեզի կառավարման համակարգի սահմանումը,
զ) մանկապարտեզի վերակազմակերպումը և լուծարումը,
է) մանկապարտեզի լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.
ը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
33. Համայնքի ղեկավարն իրականացնում է մանկապարտեզի ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
34. Համայնքի ղեկավարը՝
ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է մանկապարտեզի կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
բ) վերահսկողություն է իրականացնում մանկապարտեզի գործունեության նկատմամբ.
գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում մանկապարտեզի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.
դ) լսում է մանկապարտեզի գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.
ե) վերահսկողություն է իրականացնում մանկապարտեզին ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.
զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ մանկապարտեզի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.
է) հաստատում է մանկապարտեզի տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը .
ը) իրականացնում է մանկապարտեզի կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

35. Մանկապարտեզի ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով մանկապարտեզում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

36. Տնօրենն իրականացնում է մանկապարտեզի ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում, ղեկավարում է մանկապարտեզի գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

37. Տնօրենը

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս մանկապարտեզի անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) սահմանում է մանկապարտեզի կառուցվածքն ու կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է մանկապարտեզի մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է մանկապարտեզի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է մանկապարտեզի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է մանկապարտեզի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

թ) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում մանկապարտեզի աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է մանկապարտեզի հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և մանկապարտեզի մանկապարտեզի կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

38. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

39. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների և մեթոդական հանձնարարականների կատարումը.

գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

դ) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.

ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.

զ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

40. Դաստիարակը՝
ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջությունը ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.
բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.
գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:
41. Երաժշտական ղեկավարը՝
ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.
բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ.
42. Ֆիզիկական կուլտուրայի հրահանգիչը՝
տանում է 1) նախադպրոցական կրթական ծրագրերին համապատասխան՝ երեխաների հետ ֆիզիկական դաստիարակության աշխատանքներ.
2) ցույց է տալիս առաջին բժշկական օգնություն: Մշտապես հետևում է պարապմունքների վայրի սանիտարահիգիենիկ վիճակին և նորմաների պահպանմանը.
3) բուժաշխատողների հետ համատեղ հսկում է երեխաների առողջության վիճակը, կարգավորում նրանց ֆիզիկական անբավարարությունը: Պատասխանատու է երեխաների կյանքի, առողջության համար.
4) վերահսկում է օրվա ընթացքում երեխաների շարժողական ակտիվությունը: Անցկացնում է զրույցներ խմբերի դաստիարակների և սպասարկող անձնակազմի հետ ֆիզիկական դաստիարակության ուղղությամբ.
5) կազմակերպում է ծնողների հետ բացատրական աշխատանք՝ պարապմունքներին երեխաների նախապատրաստման ուղղությամբ:
43. պարուսույցը (պարի խմբավարը)
1) նպաստում է երեխայի երաժշտական ընդունակությունների, պարարվեստային կարողությունների, հմտությունների, հուզական ներաշխարհի զարգացմանը, գեղագիտական ճաշակի ձևավորմանը, դրա համար օգտագործելով մանկական պարարվեստի գործունեության կազմակերպման բոլոր ձևերը և տեսակները.
2) նպաստում է նախադպրոցական տարիքի երեխաների ստեղծագործական գործունեության զարգացումը.
3) ապահովում է այդ հարցերում նախադպրոցական հաստատության մասնագետների և ծնողների (կամ նրանց օրինական ներկայացուցիչների) համագործակցությունը.
4) մասնակցում է հաստատության մանկավարժական խորհրդի գործունեությանը.
5) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական, պարարվեստի դաստիարակության հարցերի շուրջ.
6) իրավասու է՝
ա. պատասխանատու է կրթական ծրագրի իրականացման, ինչպես նաև կրթական գործընթացի ընթացքում երեխաների կյանքի և առողջության պահպանման համար.
բ. հաշվետու է հաստատության ղեկավարին և մանկավարժական խորհրդին:
44. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝
ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և պարագաների ստացումն ու պահպանությունը.
բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.
գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.
դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

VI. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

45. Մանկապարտեզի սեփականությունը ձևավորվում է մանկապարտեզի հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև մանկապարտեզի գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
46. Մանկապարտեզն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) իր կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
47. Հիմնադիրը սեփականության իրավունքով մանկապարտեզին պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ մանկապարտեզի լուծարումից հետո մնացած գույքի:

48. Մանկապարտեզի սեփականության պահպանման հոգսը կրում է մանկապարտեզը:
49. Մանկապարտեզի սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:
50. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից մանկապարտեզին ամրացված գույքը:
51. Մանկապարտեզն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Մանկապարտեզն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, ավագանու որոշմամբ կամ մանկապարտեզի կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել մեկ տարվանից ավել՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում մանկապարտեզի ստացած եկամուտները մանկապարտեզի սեփականությունն են: Մանկապարտեզին ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:
Մանկապարտեզի լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:
52. Մանկապարտեզը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տնօրինում է իր ֆինանսական միջոցները:
53. Մանկապարտեզը ֆինանսավորում է հիմնադիրը: Մանկապարտեզի ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջետային և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:
54. Մանկապարտեզի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են.
ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.
բ) բարեգործական, նպատակային ներդրումները, ծնողական վճարները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.
գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և մանկապարտեզի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:
55. Մանկապարտեզի գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VII. ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

56. Մանկապարտեզը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

48

Հավելված թիվ 2

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մեծ Մանթաշ համայնքի ղեկավարի 2020թվականի մարտի 02-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Մեծ Մանթաշի մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին>> թիվ 16-Ա որոշման

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԵԾ ՄԱՆԹԱՇ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 02.03.2020Թ.
ԹԻՎ 16-Ա ՈՐՈՇՄԱՄԲ
ՄԵԾ ՄԱՆԹԱՇ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝
---------- Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ՄԵԾ ՄԱՆԹԱՇԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը փոխանցվող (անժամկետ և անհատույց իրավունքով), Մեծ Մանթաշ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքի ցանկ

հ/հ	Անվանումը	քանակ	Սկզբնական արժեք /հազար դրամ/	Մաշվա-ծությունը /հազար դրամ/	Մնացորդային արժեքը /հազար դրամ/
1	Մեծ Մանթաշի մանկապարտեզի շենք 427,5ք.մ.	1	15344,4	0	15344,4
	Ընդամենը	1	15344,4	0	15344,4